Վազգեն Սարգսյան՝ ինչու զորքը իջեցրի Ազատության հրապարակ. սեպտեմբեր, 1996թ

September 25, 2019

1996-ի սեպտեմբերի նախագահական ընտրություններից անմիջապես հետո, պաշտպանության նախարար, ամենակարող **Վազգեն Սարգսյանը** հայկական զորքը՝ տանկերը, իջեցրեց Ազատության հրապարակ:

1996-ի դեկտեմբերին մի հարցազրույցում Վազգեն Սարգսյանը բացատրել է, թե ինչու է բանակը միջամտել Հայաստանի քաղաքական գործընթացներին.

–***Ատելության այն դոզան, որ կար մեր հասարակության մեջ (սեպտեմբերյան դեպքերի-խմբ.), ինձ հուսահատության հասցրեց: Քաղաքացիական պատերազմը կանխելու մտադրությամբ գնացի Թատերական հրապարակ: Ուզում էի ժողովրդին համոզել, որ մի քանի օրով ազատեին հրապարակը: Հենց այդ նպատակով էլ հրաման արձակեցի զորքեր քաղաք մտցնել: Այդ օրը ես նկատեցի մի 60-ամյա կնոջ ատելությամբ լեցուն հայացքը, որ ինձ էր ուղղել. Սարսափելի էր: Ես արժանի չէի այդ հայացքին:***

1996թ. սեպտեմբերի 22-ին Հայաստանում կայացան նախագահական ընտրություններ, որոնք ժողովրդի հիշողության մեջ մնացին որպես առաջին կեղծված ընտրություններ: Պաշտոնական արդյունքներով **Լևոն Տեր-Պետրոսյանը** ստացել էր քվեների շուրջ 52, **Վազգեն Մանուկյանը**՝ ավելի քան 41 տոկոսը: Գլխավոր անձը, ով ապահովեց Տեր-Պետրոսյանի պաշտոնական հաղթանակը, **Վազգեն Սարգսյանն** էր: